Հավելված 6
ՀԲԿ___ԳՀԾՁԲ 21 /0601* ծածկագրով
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ / ԱՎՏՈՄԱՏ ԿԱՅԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ/ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀԲԿ___ԳՀԾՁԲ 21 /0601

ք. _____ «_31_» օգոստոսի 2021թ.

„ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ„ՓԲԸ ի դեմս տնօրեն ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **ԼՈԿԱՏՈՐ ՓԲԸ-ն**, ի դեմս տնօրեն Ա. Խաչատրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է -_**ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ / ԱՎՏՈՄԱՏ ԿԱՅԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ/ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

** լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:*

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ համարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված __2__ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2980000 (_Երկու մլն ինը հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ 496667 ԱԱՀ-ն:[18]

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն

---

[18] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[23]

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

---

[23] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու [illegible]ով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ	«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան,	ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ	ՀՀ 2474703386220000
220345140192000	00095651
03017721	Տնօրեն
Տնօրեն	Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ	
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 31 » օգոստոսի 2021 թ. կնքված
ՀԲԿ___ ԳՀԾՁԲ 21 /0601 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	98351110	***ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ / ԱՎՏՈՄԱՏ ԿԱՅԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ/ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ***	հատ	2980000	1	Ք.Հրազդան, Մ.բաղրամյան թաղ. Պուրակային 32	Ծառայությունների մատուցումը մինչև 25.12.2021թ.
				2980000			

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*
*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՖԱՅԼՈՎ ԿՑՎՈՒՄ Է

ԳՆՈՐԴ

ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան,
Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
220345140192000
03017721
Տնօրեն

ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 2474703386220000
00095651
Տնօրեն

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

/ստորագրություն/ Կ.Տ

ՀՐԱԶԴԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ,,ՓԲԸ-ի

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ / ԱՎՏՈՄԱՏ ԿԱՅԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ/ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՑԱՆԿ

	Անվանում	քանակ
1	Արգելափակոց 4մ,GENIUS, ITALY, SPIN4	2
2	Կանգնակ փոշեներկած -ցանցային մուտքային հսկիչ տերմոտպիչ սարք 80մմ CUSTOM, ընթերցիչ RFID 125 khz/Wegand 26 ջերմոկարգավորիչով	1
3	Առկայության ինդուկցիոն ստորգետնյա տվիչ հսկիչով	4
4	Ելքային տերմինալ լրակազմ միաճառագայթային սկաներ 2D ցանցային ելքային հսկիչ ընթերցիչ RFID 125 khz/Wegand 26	1
5	Ղեկավարման ցանցային հսկիչ	1
6	Կենտրոնական համակարգ RFID 125 khz/ Wegand 26 գրանցման սարք -ծրագրային ապահովում, անձնակազմի ուսուցում, համակարգի կարգաբերում երաշխիքային սպասարկում,	1
7	Մոնտաժային նյութեր և պարագաներ	
8	Մոնտաժային աշխատանքներ	
9	Տրանսպորտային ծախսեր և բեռնատար	
10	Պրոքսիմիտի քարտեր դատարկ, առանց տպագրության	
11	Պրոքսիմիտի քարտեր սև/սպիտակ տպագրությամբ	
12	Պրոքսիմիտի քարտեր գունավոր տպագրությամբ առանց նկարի	
13	Պրոքսիմիտի քարտեր գունավոր տպագրությամբ նկարով	

Ավտոմատ վճարովի ավտոկանգառ /տեխ.բնութագիր/

Համակարգը նախատեսված պետք է լինի վճարովի ավտոկայանման ավտոմատացման համար, ինչպես բաց, այնպես էլ փակ՝ ստորգետնյա և վերգետնյա տարածքներում, որոնք ունենան մեկ կամ ավելի մուտքեր և ելքեր:

Բացի մեկանգամյա վճարմամբ կայանման՝ համակարգը պետք է նախատեսի նախատեսում է ծառայողական քարտերով կայանում՝ կոլեկտիվի անդամների համար (բաժանորդի պլաստիկ քարտի միջոցով):

Համակարգի հուսալիության ապահովման համար պետք է օգտագործվեն են բարձրորակ և տեխնիկապես հագեցած սարքավորումներ:

<u>Համակարգի առանձնահատկությունները</u>

- Վճարում մեկանգամյա կտրոներով կամ անցում բաժանորդի պլաստիկ քարտի միջոցով;
- Պաշտպանվածություն տրանսպորտային միջոցի անօրինական անցումից;
- Պետք է տեղադրվեն սարքավորումներ, որոնք նախատեսված կլինեն տարբեր եղանակային պայմանների
- Լուսային ազդանշան ավտոկայանման տեղի առկայության մասին

Մեքենաների մուտքը.

Մուտքի մոտ տեղադրվում է արգելափակոց, որը բացվում է սեղմակի միջոցով այն ժամանակ երբ արգելափակոցի առջևում կանգնած է մեքենա, բայց միայն այն դեպքում երբ արգելափակոցի հետևում մեքենա չկա: Արգելափակոցը կառավարվում է առկայության տվիչներով, որոնք տեղադրված են արգելափակոցի երկու կողմերում գետնաածածկույթի տակ:

Մեքենաների ելքը.

Հսկիչ անցագրային կետում վարորդը վճարում է օպերատորին նշված գումարը: Օպերատորը համակարգչում հաստատում է վճարումը որից հետո արգելափակոցը բացվում է: Հսկիչ անցագրային կետում տեղադրված է վճարվող գումարի հաշվարման հաշվիչ:

Այն անձանց /մշտական հաճախորդներին/абонент//, որոնք ազատված են վճարումից, անրաժեշտության դեպքում տրվում են անվճար քարտեր: Հսկիչ անցագրային կկետում տեղադրված է քարտերի համար նախատեսված ընթերցիչ: Անցաքարտեր ունեցող վարորդը քարտը մոտեցնում է ընթերցիչին և արգելափակոցը բացվում է: Արգելափակոցը փակվում է ավտոմատ կերպով:

<u>Ավտոմատ ավտոկանգառի աշխատանքի սկզբունքները</u>

Երբ մեքենան մոտենում է ավտոկանգառի մուտքին, տպագրող ավտոմատի միջոցով ստանում է մեկանգամյա կայանման կտրոն՝ շտրիխ-կոդով, կամ կարդացող սարքին է մոտեցնում նախապես գրանցված պլաստիկ քարտը: Համակարգը ավտոմատ ստուգում է քարտի իսկությունը, գործողության ժամկետը և մեքենայի առկայության տվիչի միջոցով ֆիքսվում է ավտոմեքենան: Եթե լուսային ազդանշանը ցույց է տալիս ավտոկանգառում ազատ կայանատեղի առկայություն, և ավտոկայանման արգելափակոցի դիմաց չկա արգելք /մեքենա/՝ ավտոմատացված համակարգի միջոցով բացվում է արգելափակոցը և մեքենան մուտք է գործում ավտոկայանատեղի: Արգելափակոցի աշխատանքը կարգավորվում է մեքենայի առկայության տվիչների միջոցով, որոնք տեղադրվում են արգելափակոցներից առաջ և հետո՝ ծածկույթի տակ:

Ավտոկայանատեղից դուրս գալուց առաջ, ելքի մոտ, վարորդը հերթապահ գանձապահին է ներկայացնում կայանման կտրոնը, հաշվարկվում է կայանման դիմաց գանձվող գումարի չափը, գումարը ստանալուց հետո գանձապահը բացում է արգելափակոցը և մեքենան դուրս է գալիս տարածքից: Պլաստիկ քարտով մուտք գործած վարորդը կարդացող սարքին է մոտեցնում քարտը, համակարգը ավտոմատ բացում է արգելափակոցը:

Գործում է կայանման համար նախատեսված վճարների ճկուն համակարգ:

Ավտոմատացված ավտոկայանատեղի ծրագրային ապահովումը հնարավորություն է տալիս.

1. օգտվել մեկանգամյա կտրոնային տարբերակից ,

արկարաժամկետ աբոնենտային տարբերակից:

I-ին տարբերակում, ավտոմեքենայով մուտք գործելուց հաճախորդը վերցնում է կտրոն, իսկ դուրս գալուց այն մոտեցնում օպերատորին, վերջինս ծրագրի միջոցով հաշվում է ներսում գտնված ժամանակահատվածը և նախապես մուտք արված ժամային գրաֆիկի միջոցով ստանում է գումարի չափը, որը պետք է վճարի հաճախորդը:

II-րդ տարբերակի՝ աբոնենտային տարբերակի դեպքում, ծրագրում նախապես ստեղծվում են աբոնենտային համակարգի տարբեր տեսակներ, հաճախորդը ընտրում է իր նախընտրած տեսակը, վերցնում է քարտը: Այնուհետև մուտքն ու ելքը կատարվում է քարտի միջոցով, քարտը մոտեցնում է ընթերցիչին և եթե քարտը վավեր է, ապա բացվում է արգելափակոցը և մուտք է գործում, նույն սկզբունքով էլ դուրս գալու ժամանակ կրկին քարտը մոտեցնում է ընթերցիչին և դուրս գալիս:
Համակարգի հնարավորությունները:

1. Ստանալ աբոնենտների ցուցակ:
2. Մեքենաների մուտքի և ելքի ժամերի մասին ինֆորմացիա:
3. Ընտրված ժամանակահատվածում ֆինանսական հաշվետվություն հաշվապահության համար :
4. Ցուցակներում ընտրության և ֆիլտրացման հնարավորություն (մեքենայի համարով, քարտով, կտրոնով և այլն):
5. Արգելափակոցը ստիպողաբար (վթարային) բացվելու հնարավորություն աշխատակցի կողմից,(ոչ քարտի կամ կտրոնի միջոցով):
6. Հաճախորդին ՀԴՄ կտրոն տալ վճարման դեպքում:
7. Համակարգը լինի բազմալեզու, այդ թվում հայերենը պարտադիր
8. Ստանալ աբոնենտների ցուցակ:
9. Մեքենաների մուտքի և ելքի ժամերի մասին ինֆորմացիա:
10. Ընտրված ժամանակահատվածում ֆինանսական հաշվետվություն հաշվապահության համար :
11. Ցուցակներում ընտրության և ֆիլտրացման հնարավորություն (մեքենայի համարով, քարտով, կտրոնով և այլն):
12. Արգելափակոցը ստիպողաբար (վթարային) բացվելու հնարավորություն աշխատակցի կողմից,(ոչ քարտի կամ կտրոնի միջոցով):
13. Հաճախորդին ՀԴՄ կտրոն տալ վճարման դեպքում:
14. Համակարգը լինի բազմալեզու, այդ թվում հայերենը պարտադիր

Արգելափակոց 2 հատ
Արգելափակոց SPIN 4 ձողի երկարությունը 4 մ ,առկայության տվիչներ 2 հատ, լուսային թարթիչ 1 հատ, հերակառավարման վահանակ 2 հատ, պահակակետում հերթապահի ձեռքի ղեկավարման վահանակ 1 հատ, տեղադրման աշխատանքներ : Արգելափակոցի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս ապահովել մեքենաների ազատ մուտք տարածք և միևնույն ժամանակ բացառել օտար մեքենաների մուտքը տարածք : Համակարգը ունի ընդլանվելու հնարավորություն՝ավելացնել հերակառավարման վահանակների քանակը ըստ պահանջարկի:
Առկայության տվիչ 4 հատ
Ավտոմեքենայի առկայության տվիչ - ինդուկտիվ շրջանակ

Կանգնակ տպող սարքով 1 հատ /Մուտքի կտրոնների տրման կանգնակ - ներկառուցված տպող սարք, կտրոնների տրման սեղմակ, պրոքսիմիտի քարտերի ներկառուցված ընթերցիչ, ջերմոկարգավորիչ/
Ելքային կանգնակ 1 հատ /սկաներ ,ցանցային ելքային հսկիչ, ընթերցիչ/

...արֆեյս /ցանկացած գործողություն մուտքի և ելքի ղեկավարման հսկիչի միջոցով
...ակարգչին և հակառակ ուղությամբ ինֆորմացիայի փոխանցող սարք/
Երանցման տերմինալ/Ավտոկանգառի ավտոմատացված համակարգ
պրոքսիմիտի քարտերի գրանցման և քարտերի ստուգման տերմինալ /
Ղեկավարման ցանցային հսկիչ / Հասցեային սարք, որը կառավարում է անցումային համակարգի իրավունքի հնարավորությունները տպասալիկի միջոցով ընթերցիչներից ինֆորմացիան փոխանցվում է համակարգչին համապատասխանաբար ստանում է հրահանգ կատարելու գործողություններ:

*Բոլոր սարքերը պետք է լինեն չօգտագործված: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումն իրականացնում է կատարողը իր հաշվին և իր միջոցներով:

** Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված սարքերի տարբերանշանին կամ ապրանքանիշին հղում անելու դեպքում կիրառվում է կամ համարժեք բառերը:

*** Կատարողը պարտավորվում է ապահովել մատուցված ծառայության 365 օրացուցային օրվա երաշխիքային սպասարկում, որը պետք է ներառված լինի ընդհանուր արժեքի մեջ, իսկ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված սարքերը պետք է ունենան առնվազն 365 օրվա երաշխիքային ժամկետ:

****Կատարողը առաջարկվող գնի մեջ պետք է ներառի նաև վերոնշյալ սարքավորումների (ապրանքների) տեղադրման և կարգաբերման աշխատանքները:

Հավելված N 2
« 31 » օգոստոսի 2021 թ. կնքված
ՀԲԿ___ԳՀԾՁԲ_21 /0601 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների , այդ թվում**				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
		ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ / ԱՎՏՈՄԱՏ ԿԱՅԱՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ/ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ	745000	1490000	2235000	2980000	2980000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
ՀՐԱԶԴԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ
Կոտայքի մարզ, ք.Հրազդան,
Մ.Բաղրամյան թաղ., Պուրակային 32
Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ
220345140192000
03017721
Տնօրեն

ԿԱՐԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ
/ստորագրություն/ Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«ԼՈԿԱՏՈՐ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի
36ա-22
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 2474703386220000
00095651
Տնօրեն

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
/ստորագրություն/ Կ.Տ